



Կարիքի գնահատմամբ նվազագույն Եկամտի հատկացման տեղեկատվական թերթիկ

Կարիքի գնահատմամբ նվազագույն եկամուտը (BMS) վերաբերում է այն նպաստներին, որոնք ապահովում են այն մարդկանց կենսական ու կացարանային կարիքները, ովքեր հայտնվել են ֆինանսապես կարիքավոր վիճակում և իրենց սեփական միջոցներով (եկամուտ, ունեցվածք) չեն կարողանում հոգալ իրենց ապրուստը:

Դիմելու նախապայմաններ

- Եկամտի բացակայություն կամ խիստ ցածր եկամուտ
- Ունեցվածքի բացակայություն
- Հիմնական բնակավայր ՆԱ-ում
- Երկարատև կացության իրավունք Ավստրիայում
- Աշխատելու պատրաստակամություն, եթե անաշխատունակություն առկա չէ
- Ինտեգրման պատրաստակամություն (օր. գերմաներենի դասընթացների, արժեքների և ճանաչողական կուրսերի հաճախում)
- Փաստաթղթերի ներկայացում (տե՛ս հավելված 1)

Դիմումը պետք է ներկայացնել

- Շրջանային վարչությունում կամ քաղխորհրդում
- Բնակության վայրի համայնքում

Որոշման իրավասություն

- Շրջանային վարչություն կամ քաղխորհրդ

Նպաստներ

- Դրամական կամ նյութական նպաստ ընդհանուր հաշվարկված նվազագույն ստանդարտների տեսքով (տե՛ս հավելված 2)
- Անձանց համար, ովքեր վերջին 6 տարվա ընթացքում Ավստրիայում բնակվել են 5 տարուց պակաս ժամկետով, սկզբունքորեն գործում են ինտեգրման նվազագույն ստանդարտները (տե՛ս հավելված 3)
- Համատեղ տնային տնտեսությունում կամ հանրակացարանում ապրող բոլոր անձանց համար նախատեսված նվազագույն ստանդարտի գումարը սկզբունքորեն առավելագույնը 1.500 եվրո է:
- Օրենքով նախատեսված բժշկական ապահովագրության գումարների ստանձնում
- Աշխատանքային գործունեության վերսկսման պարզավճար

Բժշկական ապահովագրության վճարում / դիմում

- Փոխանցումները բացառապես կատարվում են տեղական ընթացիկ հաշվեհամարին
- Նպաստները փոխանցվում են ամսվա վերջում
- Գերատեսչության կողմից ՆԱ-ի Պետական բժշկական ապահովագրության համար կարող է ուղղակիորեն գրանցվել միայն դիմումատուն
 - ➔ Դիմումատուի ընտանիքի բոլոր անդամների համար ՆԱ-ի Պետական բժշկական ապահովագրության համար պետք է ներկայացնել համատեղ ապահովագրության դիմում (այս գումարները սակայն վճարվում են նվազագույն եկամտի շրջանակում):

Պարտավորություններ

- Պահանջի նախապայմանների ցանկացած փոփոխության մասին պետք է երկու շաբաթվա ընթացքում տեղեկացնել Շրջանային վարչությանը կամ քաղխորհրդին

Օրինակ՝

- Եկամտի կամ ունեցվածքի փոփոխություններ
- Բնակավայրի կամ ընտանեկան պայմանների փոփոխություններ

- Ավստրիայում օրինական կացության իրավունքի փոփոխություններ
- Աշխատանքային գործունեության վերսկսում
- Բուժում հիվանդանոցներում կամ առողջարաններում
- Երկու շաբաթից երկար տևող այլ բացակայություններ
- Պահանջների ներկայացում երրորդ անձանց (օր. ալիմենտ, անաշխատունակության նպաստ)
- Աշխատանքային ներուժի ներդրում
- Գերմաներենի գիտելիքների պակասի դեպքում գերմաներենի դասընթացի կամ աշխատաշուկայում աշխատանք գտնելու հնարավորությունը, աշխատունակությունը բարձրացնելու կամ սոցիալական վիճակի կայունությունը լավացնելու նպատակով կազմակերպվող այլ միջոցառումների հաճախում
- Արժեքների ու ճանաչողական առնվազն ութժամյա դասընթացի հաճախում այն անձանց համար, ովքեր վերջին վեց տարիների ընթացքում 5 տարուց պակաս են բնակվել Ավստրիայում:
- Գերմաներենի գիտելիքների ձեռքբերում մինչև A2 մակադրակը ներառյալ այն անձանց համար, ովքեր վերջին վեց տարիների ընթացքում 5 տարուց պակաս են բնակվել Ավստրիայում:
- Ինտեգրման համաձայնագրի կնքում այն անձանց համար, ովքեր վերջին վեց տարիների ընթացքում 5 տարուց պակաս են բնակվել Ավստրիայում:

Մերժում/Կրճատում/Դադարեցում

Աշխատանքի անցնելուց հրաժարվելու, ինտեգրման միջոցառումներին (գերմաներենի դասընթացներ, արժեքների ու ճանաչողական կուրսեր, ինչպես նաև հանրօգուտ աշխատանքի կատարում) կամ AMS-դասընթացներին չմասնակցելու, ինչպես նաև որևէ միջոցառմանն անհարգելի բացակա օրերի դեպքում Կարիքի գնահատմամբ նվազագույն եկամուտ ստանալու դիմումը կմերժվի կամ որևէ հատկացվող նպաստ կկրճատվի կամ ամբողջությամբ կդադարեցվի:

Հետվճարում, ծախսերի փոխհատուցում և տույժեր

Հետևյալ դեպքերում նպաստը ենթակա է հետվճարման, և կարող է նաև տույժ գանձվել.

- Փոփոխությունների մասին ծանուցման պարտավորության խախտման դեպքում
- Միսալ տվյալներ տրամադրելու կամ էական փաստերի մասին լռելու դեպքում
- Օգտագործելի ունեցվածքի հետագա ձեռքբերման (օր. ժառանգության) դեպքում
- Նվիրատուի կողմից փոխհատուցում ստանալու դեպքում

Աշխատանքը վերսկսելու պարզևավճար աշխատանքային գործունեությունը վերականգնելու համար

Աշխատանքը վերսկսելու պարզևավճարի համար կարող են դիմել նրանք, ովքեր առնվազն վերջին 6 ամիսների ընթացքում առանց ընդհատման ստացել են Կարիքի գնահատմամբ նվազագույն եկամուտ և վերականգնել են աշխատանքային գործունեությունը (թեկուզ փոքր չափով):

Դիմումի ներկայացում և ժամկետներ.

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ են հետևյալ երկու քայլերը.

1. Աշխատանքային գործունեության վերսկսման, այսինքն աշխատանքն սկսելու մասին պետք է երկու շաբաթվա ընթացքում տեղեկացնել իրավասու շրջանային վարչությանը կամ քաղխորհրդին:
2. Աշխատանքային գործունեությունն սկսելուց, այսինքն աշխատանքն սկսելուց ամենաուշը 4 շաբաթ անց պետք է ներկայացնել աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարի գրավոր կամ բանավոր դիմում իրավասու շրջանային վարչությանը կամ քաղխորհրդին: Հնարավոր է աշխատանքային գործունեության վերսկսման մասին տեղեկացնելու ժամանակ ներկայացնել աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարի դիմումը:

Չափը.

Աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարի չափը կազմում է առավելագույնը զուտ եկամտի 1/3-ը: Եթե զուտ եկամուտը և աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարը գերազանցում են միայնակների համար վճարվող նվազագույն ստանդարտը (€ 1.182,24 – 2017թ.-ին), ապա աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարը համապատասխանաբար կկրճատվի:

Աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարը տրամադրվում է առավելագույնը 12 ամսվա համար: Առկա զբաղվածության դեպքում աշխատանքային գործունեությունը վերսկսելու պարզևավճարը կտրամադրվի այդ զբաղվածության տևողությանը համապատասխան:

Հավելված 1.

Ներկայացվող փաստաթղթեր.

1. Տվյալներ անձի վերաբերյալ.

- o Անձը հաստատող փաստաթուղթ՝ լուսանկարով
- o Ծննդյան վկայական
- o Քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ
- o ԵՏՄ-քաղաքացիների համար՝ Ինտերպոլի գրանցման վկայական
- o ոչ ԵՏՄ-քաղաքացիների համար՝ կացության թույլտվություն, փասխաստականի կարգավիճակի տրամադրման որոշում
- o Լիազորագրեր (օրինական ներկայացուցչի միջոցով ներկայանալու որոշում, ներկայանալու լիազորագիր, ...)
- o Ամուսնալուծության մասին վճիռ և վեճի խաղաղ լուծման մասին որոշում (համապատասխանաբար որոշումն ուժի մեջ մտնելու մասին նշումով)

2. Տվյալների եկամտի և ունեցվածքի մասին.

2.1. Տվյալներ եկամտի ու խնամքի համար հատկացվող նպաստի վերաբերյալ.

- o վերջին 3 ամիսների աշխատավարձն ու եկամուտը հաստատող փաստաթղթեր (նաև փոքր զբաղվածության դեպքում)
- o AMS-նպաստը հաստատող փաստաթուղթ
- o Նպաստների հատկացումը հաստատող փաստաթղթեր (PVA, SVA, ÖBB, VAEB, BVA, թոշակ արտասահմանից և այլն)
- o Հիվանդության նպաստը հաստատող փաստաթուղթ
- o Դեկրետային արձակուրդի նպաստը / երեխաների խնամքի նպաստը (օգնությունը) հաստատող փաստաթուղթ
- o Կենսաթոշակի նախավճարը հաստատող փաստաթուղթ
- o Դժբախտ պատահարի արդյունքում վճարվող թոշակները հաստատող փաստաթուղթ
- o Նյութական օգնության պահանջները / Ալիմենտների պահանջները վկայող փաստաթղթեր
- o Գրավի և/կամ վարձակալության պայմանագրեր

- o Այլ եկամուտները հաստատող փաստաթղթեր (ցմահ վարձավճար և այլն)
- o Որոշում խնամքի տրամադրման նպաստի մասին
- o Շահույթի և կորստի հաշվարկ, եկամուտների ու ծախսերի հաշվարկ վերջին 3 ամիսների համար

2.2. Տվյալներ ունեցվածքի վերաբերյալ.

- o Հաշիվների քաղվածքներ (դիմումը ներկայացնելու ամսաթվին նախորդող 3 ամիսների)
- o Ապահովագրական վկայականներ (մահվան ծախսերի ապահովագրություն, կյանքի ապահովագրություններ և այլն)
- o Խնայգրքույկներ
- o Շինարարության խնայողությունների պայմանագրեր
- o Արժեթղթեր
- o Պարտատոմսեր
- o Ավտոմեքենաներ (մարդատար, բեռնատար, տրակտորներ և այլն)
- o Այլ ունեցվածք (կանխիկ խնայողություններ և այլն)
- o Քաղվածքներ հողամասային կադաստրից

ԿԱՐԵՎՈՐ ՑՈՒՑՈՒՄ.

Օգնություն փնտրող անձը պետք է կատարի երրորդ անձանց (ծնողներ, զմուսնական զույգ...) նկատմամբ պահանջները և կարող է պահանջել երրորդ անձանցից կատարել վճարումներ, եթե դա ակնհայտ անհուսալի կամ ոչ ողջամիտ չէ, ենթադրելով, որ եթե այդպիսի վճարումները կատարվել էն երրորդ անձանց կողմից, ապա դրանց կատարման ժամանակ կարիքի գնահատմամբ նվազագույն եկամտի հատկացումների կարիք չկա կամ կա ոչ այս չափով:

3. Նաև պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը.

3.1. Այլ ապացույցներ.

- o Աշխատանք փնտրելու մասին գրառումը հաստատող տեղեկանք
- o Աշխատաշուկայի խորհրդի կողմից Սպասարկման համաձայնագիր

- o Աշխատաշուկայի խորհրդի կողմից նպաստի մերժման որոշում
- o Կենսաթոշակի ձևակերպման գործընթացի փաստաթղթեր
- o Ալիմենտների ձևակերպման գործընթացի փաստաթղթեր
- o Բժշկական փաստաթղթեր և աշխատունակությունը հաստատող փաստաթղթեր
- o Սոցիալական վիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների մասին ապացույցներ (գերմաներենի դասընթացներ և այլն)
- o Դպրոցի հաճախումները հաստատող փաստաթուղթ

3.2. Կոմունալ ծախսերը բնակարան վարձակալելու դեպքում.

- o Վարձակալության պայմանագիր / Կոոպերատիվ բնակարանի համաձայնագիր
- o Վարձավճարի ու կոմունալ ծախսերի ընթացիկ հաշիվներ
- o Ընթացիկ ամսվա վարձավճարի վճարման անդորրագիր
- o Սոցիալական նպաստի մասին ապացույցներ

3.3. Կոմունալ ծախսերի ապացույցներ սեփական տան համար.

- o Շինության ապահովագրություն (վկայագիր)
- o Ծխնելույզ մաքրողի հաշիվ
- o Թափոնների հաշիվ (աղբ)
- o Համայնքային հաշիվներ (ջուր/կոյուղի)

Հավելված 2.

2017թ. նվազագույն ստանդարտներ.

2017թ. Կարիքի գնահատմամբ տրամադրվող նվազագույն ստանդարտներ - Վարձավճար			
Մարդկանց դասակարգում	Ապրուստ	Կոմունալ ծախսեր	Գումար
Միայնակ մարդ 100%	633.35 €	211.11 €	844.46 €
Ամուսնական զույգ/համատեղ կենցաղավարություն Տնային տնտեսություն 150%	950.02 €	316.68 €	€ 1.266,70
Զափահաս անձ, ով բնակվում է համատեղ տնային տնտեսությունում 75%	475.01 €	158.34 €	633.35 €
Սկսած 3-րդ ամենատարեց չափահաս անձից, ով բնակվում է համատեղ տնային տնտեսությունում, եթե նա համատեղ տնային տնտեսությունում բնակվող որևէ այլ անձից ունի նպաստ ստանալու իրավունք 50%	316.67 €	105.56 €	422.23 €
Անչափահաս անձ, ով ունի ընտանեկան նպաստի պահանջի իրավունք 23%	145.67 €	48.56 €	194.23 €

2017թ. Կարիքի գնահատմամբ տրամադրվող նվազագույն ստանդարտներ - Սեփականություն			
Մարդկանց դասակարգում	Ապրուստ	Կոմունալ ծախսեր	Գումար
Միայնակ մարդ 100%	633.35 €	105.56 €	738.91 €
Ամուսնական զույգ/համատեղ կենցաղավարություն Տնային տնտեսություն 150%	950.02 €	158.34 €	€ 1.108,36
Զափահաս անձ, ով բնակվում է համատեղ տնային տնտեսությունում 75%	475.01 €	79.17 €	554.18 €
Սկսած 3-րդ ամենատարեց չափահաս անձից, ով բնակվում է համատեղ տնային տնտեսությունում, եթե նա համատեղ տնային տնտեսությունում բնակվող որևէ այլ անձից ունի նպաստ ստանալու իրավունք 50%	316.67 €	52.78 €	369.45 €
Անչափահաս անձ, ով ունի ընտանեկան նպաստի պահանջի իրավունք 23%	145.67 €	24.28 €	169.95 €

BMS-ի հսկիչ դրույքաչափ պետական հաստատություններից օգնություն խնդրող անձանց անձնական կարիքները հոգալու համար (13 անգամ)	67.87 €
---	----------------

Համատեղ տնային տնտեսությունում կամ հանրակացարանում ապրող բոլոր անձանց համար նախատեսված նվազագույն ստանդարտի գումարը կազմում է **առավելագույնը 1.500,00 եվրո:**

Բացառություն. Խնամքի նպաստ կամ քարձրացված ընտանեկան նպաստ ստացող կամ երկարատև ժամկետով անաշխատունակ անձանց նվազագույն ստանդարտ նպաստները ենթակա չեն կրճատման:

Հավելված 3.

Նվազագույն ստանդարտ - Ինտեգրում.

Նվազագույն ստանդարտներ - Ինտեգրում			
Մարդկանց դասակարգում	Ապրուստ	Կոմունալ ծախսեր	Գումար
Միայնակ մարդ, մեկ անձի համար	522.50 €	300.00 €	822.50 €
Չափահաս անձինք, ովքեր տնային տնտեսությունում կամ հանրակացարանում բնակվում են միայնակ կամ այլ չափահաս անձանց հետ, մեկ անձի համար	422.50 €	150.00 €	572.50 €
Անձինք, սկսած տնային տնտեսությունում կամ հանրակացարանում բնակվող 3-րդ չափահաս անձից, մեկ անձի համար	422.50 €	-	422.50 €
Առաջին 3 անչափահաս անձանց համար, ովքեր ապրում են MS ինտեգրման նպաստ ստացող միայնակ անձի հետ, մեկ անձի համար	179.17 €	-	179.17 €
Անչափահաս անձանց համար, մեկ անձի համար	129.17 €	-	129.17 €

Համատեղ տնային տնտեսությունում կամ հանրակացարանում ապրող բոլոր անձանց համար նախատեսված նվազագույն ստանդարտի գումարը կազմում է առավելագույնը 1.500,00 եվրո:

Բացառություն. Խնամքի նպաստ կամ Բարձրացված ընտանեկան նպաստ ստացող կամ երկարատև ժամկետով անաշխատունակ անձանց նվազագույն ստանդարտ նպաստները ենթակա չեն կրճատման: